

ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ԺԵՄԱՐԱՆԸ ՀԱՅՏԵՐԱՐՈՒՄ Է ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ 1957—1958 ՈՒՍՈՒՄՆԵՍԿԱՆ ՏԱՐԵԾՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանը գիշերօթիկ դպրոց է վեց դասարաններով— երեքը՝ դասարանական, երեքը՝ լսարանական: Նրա նպատակն է պատրաստել զարգացած և ազգանվեր հոգևորականներ: Ճեմարանը տալիս է բարձրագույն հոգևոր կրթություն: Ուսանողներին ձրիաբար տրամադրվում են հանրակացարան բոլոր հարմարություններով, հանդերձեղեն, սնունդ, գրեհական պիտույքներ և այլն:

Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան կարող են ընդունվել Հայաստանյայց Առաքելական եկեղեցու զավակ եղող 18-ից 25 տարեկան ամուսի անձինք, որոնք չեն պատկանում որևէ կուսակցության, զերծ են ֆիզիկական բերությունից և հիվանդությունից, չեն դատված և ունեն ավագն 7-ամյա կրթություն:

Դիմողները բնություն պիտի հանձնեն հայոց լեզվից ու գրականությունից, հայ ժողովրդի պատմությունից և երգեցողությունից: Բարձր կրթություն ունեցող բեկնածուները կտեղավորվեն համապատասխան դասարաններում:

Դիմողները պիտի ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

1. Ինքնագիր դիմում այն մասին, որ իրենք ճեմարանն ավարտելուց հետո ցանկություն ունեն հոգևորական դառնալու:
2. Բարի վարուց վկայական՝ ստորագրված եկեղեցական իշխանության կողմից:
3. Բժշկական վկայական՝ առողջության մասին:
4. Մենդյան և մկրտության վկայական:
5. Կրթության վկայական կամ համապատասխան տեղեկանք:
6. Երեք լուսանկար:

Առատասանմանյան երկրների բեկնածուները պետք է իրենց դիմումն ու հարակից փաստաթղթերը ներկայացնեն իրենց բեմերի առաջնորդներին ոչ ուշ քան սույն թվականի օգոստոսի 1-ը, իսկ ներքին բեմերի բեկնածուները՝ մինչև օգոստոսի 15-ը՝ Հոգևոր ճեմարան, Հայկական ՍՍՌ, Էջմիածին:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ